ԺԻՐԱՅՐ ՄԻՐՈՒՄՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ 8-ՐԴ ԴԱՐՈՒՄ

8-րդ դարի Սյունյաց իշխանական տան վերաբերյալ սկզբնաղբյուրները սակավ են: Հոդվածում ամփոփ ներկայացրել ենք 8-րդ դարի սկզբներին Սյունիքում իշխած իշխանների կառավարման մոտավոր ժամանակացույցները, որոնց մասին ոչ ամբողջական տեղեկություններ են հաղորդում Ստ. Օրբելյանը, Մ. Կաղանկատվացին: Պատմական տեղեկությունների համեմատական քննության արդյունքում փորձեցինք մոտավոր ճշտությամբ կազմել նաև Սյունիքի 8-րդ դարի իշխանների անվանացուցակը և նրանցից մի քանիսի կանանց՝ իշխանական տոհմերի պատկանելության հարցը:

Բանալի բառեր՝ *Սյունիքի իշխանական տուն, կառավարման տարիներ, 8-րդ դար, ժամանակագրություն, հիշատակել, անվանացանկ:*

Սյունյաց իշխանական տան 8-րդ դարի վերաբերյալ սկզբնաղբյուրները բավական սակավ են: Սյունյաց իշխանների ցանկը թվարկելիս Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը Հովհանից հետո հիշատակում է **Քուրդոյին**, որը իշխել է 8-րդ դարի սկզբին[1]: Նրա կառավարման թվագրությունը չպետք է դժվարություն հարուցի, քանզի Օրբելյանը, նշելով Բաբիկից հետո կառավարած Սյունյաց իշխաններին, որոնք թվով 20-ն են՝ ներառյալ Քուրդոն, տալիս է 332 տարվա ժամանակաշրջան [2]: Ինչպես հայտնի է, Բաբիկը կառավարել է պարսից Շապուհ II արքայի 68-րդ տարում և իշխել 21 տարի (377-398)[3]: Ուստի առանց դժվարության կարող ենք պարզել Քուրդոյի կառավարման վերջին տարին՝ 398+332=730: Քանի որ Օրբելյանը Քուրդոյին տալիս է 18 տարվա իշխանություն[4], ապա կստանանք 712-730 թթ.: Սակայն, հիմք ընդունելով Օրբելյանի թվարկած 20 իշխաններին հատկացրած կառավարման տարիները, ստանում ենք այլ թիվ՝ 311: Կարծում ենք, 332 տարվա մեջ պետք է հաշվել նաև Բաբիկի 21 տարվա իշխանությունը և իսկապես կստանանք 332 թիվը: Այս դեպքում Քուրդոյի իշխանության տարիները կլինեն 691-709 թթ.: Քուրդոյի կառավարման համար գրեթե նույն տարեթիվն է նշում նաև Ղ. Ալիշանը՝ նրա կառավարման տարիները նշելով 693-712թթ.[5]: Մ. Բրոսսեն Քուրդոյի իշխանության վերջին տարին համարում է 710թ.[6]: Նշենք նաև, որ Ստ. Օրբելյանի աշխատության 1986թ. հրատարակության ծանոթագրության մեջ Ա. Աբրահամյանը թվագրումը կատարել է Բաբիկի իշխանության վերջին տարուց սկսած[7]:

Այնուամենայնիվ, համակարծիք ենք, որ տարեթվի ճշտման կարիք կա, քանի որ դրանով վերջնականապես կճշտվեն Սյունյաց ոչ միայն մինչև 8-րդ դարը իշխած իշխանների կառավարման տարիները, այլև՝ մինչև 9-րդ դարի

1 **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 96:
2 Նույն տեղում, էջ 96:
3 Նույն տեղում, էջ 94-95:
4 Նույն տեղում, էջ 96:
5 **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1898, էջ 13, 17:
6 Histoire de la Siounie par Stephanos Orbelian; traduite de l´armenien par M. Brosset, premier livraison, Histoire de la Siounie, Saint-Petersbourg, 1864, p. 32.
7 **Օրբելյան Ստ.**, նշվ.աշխ., էջ 427, ծանոթ. 518:

սկիզբը՝ Վասակ Նահապետը կառավարած իշխանների թիվն ու նրանց գործունեության ժամանակաշրջանը:

Սյունյաց տան հետագա իշխանների մասին վկայությունները սակավ են: Օրբելյանը հանգամանորեն ներկայացրել է 821թ. դեպքերի նկարագրությունը և Վասակ Նահապետի ու նրա սերունդների մասին տեղեկությունները: Այսպիսով՝ ակներև է 80-90 տարվա բացը: Պետք է նշել, որ 8-րդ դարը հայոց պատմության ամենաքիչ լուսաբանված ժամանակաշրջաններից մեկն է: Այս շրջանի վերաբերյալ, չհաշված Ղևոնդի «Պատմությունը», բավական կցկտուր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան մեր մյուս պատմիչները: Օրբելյանը նշում է, որ Քուրդոյից հետո իշխել են 2-3 իշխաններ, որոնց անուններն անհայտ են[1]:

Արաբ մատենագիրների տեղեկությունների համաձայն՝ Սիսականի իշխանի դուստրը 703թ. գերի տարվեց Ասորիք[2]: Այստեղ նրա հետ ամուսնացավ Ուսայդ իբն Զաֆիր ալ-Սուլայմը: Նրանց որդին էր Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին, ով Հայաստանի ուստիկան է նշանակվել 3 անգամ՝ 752-754, 759-770, 775-780 թթ.[3]: Նա 8-րդ դարի երկրորդ կեսի Արաբական խալիֆայության ամենանշանավոր զորավարներից մեկն էր, բազմաթիվ անգամ աչքի էր ընկել Բյուզանդիայի և խազարների դեմ մղված պատերազմներում; 759/60թ. Յազիդ իբն Ուսայդը խալիֆ Աբու Ջաֆար ալ-Մանսուրի (754-770թթ.) թելադրանքով ամուսնանում է խազարների խաքանի Խաթուն անունով դստեր հետ[4]: Սակայն 2 տարի և 4 ամսվա ամուսնությունից հետո անսպասելիորեն մահանում են Խաթունը և նրա 2 որդիները՝ մեծ վիշտ պատճառելով Յազիդին[5]: Նա 753թ. Հայոց իշխան է նշանակել Սահակ III (753-775թթ.)[6] Բագրատունուն: Հայաստանի ոստիկաններ նշանակվեցին նաև Յազիդ իբն Ուսայդի երկու որդիները՝ Խալիդ և Ահմադ: Խալիդ իբն Ուսայդը Հայաստանի ոստիկանն էր 794թ[7], իսկ Ահմադ իբն Ուսայդը Հայաստանի ոստիկան է նշանակվել 2 անգամ 796-797 և

---

1 Նույն տեղում, էջ 254:

2 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Խալիֆա իբն Խայյաթ, Պատմություն, էջ 148, Բալազուրի, Երկրների նվաճումը, ներածությունը և թարգմանությունը բնագրերից **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Եր., 2005, էջ 276: տե՛ս նաև Баладзори, Книга завоевания стран, текст и пер. **Жузе П.**, Баку. 1927, стр. 15-16. **Նալբանդիան Հ.**, Արաբացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, Եր., 1956, №1, էջ 111-112, 113:

3 Օտար աղբյուրները., Բալազուրի, նշվ. աշխ., էջ 280, 366, տե՛ս նաև **Տեր Ղևոնդյան Ա.**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, «ՊԲՀ», Եր., 1977, №1, էջ 121: **Նալբանդիան Հ.**, նշվ. աշխ., էջ 111-112, 113, Մ., Բիթարյան *Արմինիայի արաբ ոստիկանների ժամանակագրությունը.* «ԼՀԳ», Եր., 1989, № 6, 96:

4 Средневековые исторические истпчники Вастока и Запада, **Абу Мухаммад Ахмад ибн А՛Сам ал-Кифи**, Книга завоеваний, част II, пер. **З. Буниатова**, Баку. 1981, стр. 18. Баладзори, նշվ. աշխ., стр. 20. Տե՛ս նաև Օտար աղբյուրները., Բալազուրի, նշվ. աշխ., էջ 280, **Ղևոնդ**, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Եր., 1982, էջ 109:

5 Средневековые исторические истпчники Вастока и Запада., стр. 18.

6 **Ղևոնդ**, նշվ. աշխ., էջ 105:

7 Օտար աղբյուրները., Յակուբի, Պատմություն, էջ 374: Տե՛ս նաև **Տեր Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 123, **Նալբանդիան Հ.**, նշվ. աշխ., էջ 115:

810-811թթ.[1]: 2 անգամ 825-826 և 829թթ. Հայաստանի ոստիկան է նշանակվել նաև Ահմադի որդի Աբդ ալ-Ալան[2]:

Ղ. Ալիշանը Քուրդոյից հետո Սյունիքի իշխան է նշում Վասակ Գ-ին՝ տալով նրան մոտ 22 (714-734 թթ.) տարվա իշխանություն[3]: Դժբախտաբար նա չի նշում իր աղբյուրը, ինչը չի հաստատվում պատմական այլ սկզբնաղբյուրներով: Ամենայն հավանականությամբ, Քուրդոյին հաջորդել է Բաբկեն իշխանը, որը հիշատակվում է Սյունիքի եպիսկոպոս Ստեփանոս Ա-ի ձեռնադրության հետ կապված տեղեկության մեջ: «Այն ժամանակ վախճանվել էր Սյունյաց Հովհան եպիսկոպոսը, իսկ Սյունիքի իշխանն էր Բաբկենը, ինչպես և Քուրդը, որոնք եկան Դավիթ կաթողիկոսի մոտ՝ նրանից խնդրելու մեծ իմաստասեր երանելի Ստեփանոսին[4]»: Նույն տեղեկությունը հաղորդում են նաև Մովսես Կաղանկատվացին (Մովսես Դասխուրանցի)՝ նշելով, որ «Բաբկենի ու Քուրդոյի խնդրանքով նա՝ [**Ստեփանոսը**] (մեջբերումն ու ընդգծումը մերն է՝ ***Ժ. Միրումյան***), ձեռնադրվում է Սյունիքի եպիսկոպոս»[5] և Կ. Գանձակեցին «Եւ ձեռնադրէ զնա տէր Դաւիթ եպիսկոպոս Սիւնեաց, ի խնդրոյ Քուրդոյի եւ Բաբգենի իշխանաց Սիւնեաց»[6]: Այստեղ հիշատակվող Դավիթ կաթողիկոսը Հայոց կաթողիկոս Դավիթ Ա Կոտայեցին է (728-741թթ.), իսկ Հովհանը Սյունյաց եկեղեցու աթոռակալ Հովհան Բ-ն (725-734)[7]: Ստեփանոս Ա-ն (734-735), չնայած իր համբավին, աթոռակալել է ընդամենը մեկ տարի և սպանվել անառակ կնոջ ձեռքով «հայոց թվականության 184 թվականի Հրոտից ամսվա տասնհինգին»[8]: Այն համապատասխանում է մեր թվականության 735թ. հուլիսի 21-ին: Այս տեղեկությունները մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ Քուրդոյին հաջորդել է Բաբկենը, որը, մեր կարծիքով, Քուրդոյի որդին էր ու անմիջական հաջորդը: Կարելի է կազմել նաև նրա կառավարման մոտավոր ժամանակացույցը՝ 710-ից մոտ 740-ական թթ.: Նա Սյունիքի թվով երրորդ Բաբկեն իշխանն է[9]: Բաբկեն III-ի կինը Արկազ գյուղի պարոնի դուստր էր[10]: Բաբկեն III-ի հետ վկայված Քուրդը ամենայն հավանականությամբ նրա որդին էր և, ինչպես սովորաբար ընդունված էր Սյունիքի և մյուս իշխանական տներում, կրում էր պապի անունն ու իշխանական գահին հաջորդեց հորը: Բաբկեն III-ի դուստր էր Գողթան գավառի իշխան Վահանի կինը, որին Ալիշանը տվել է Սիսակուհի գեղեցիկ անունը[11]: Այսպիսով, կարող ենք կազմել 8-րդ դարի առաջին կեսի Սյունիքի իշխանների կառավարման հաջորդականությունը՝ **Քուրդո կամ Քուրդ I՝** որդի Հովհան II-ի (691-709 թթ),

---

1 Օտար աղբյուրները, Յակուբի նշվ. աշխ., էջ 375: Տե՛ս նաև **Տեր Ղևոնդյան Ա.,** նշվ. աշխ., էջ 123-124, Հ. Նալբանդիան, նշվ. աշխ., էջ 115, 117:

2 Տեր **Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 125-126, տե՛ս նաև **Նալբանդիան Հ.**, նշվ. աշխ., էջ 119:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 17:

4 **Օրբելյան Ստ.**, նշվ.աշխ.,էջ 151:

5 **Մ. Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 251:

6 **Կ. Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 74:

7 **Օրբելյան Ստ.**, նշվ.աշխ., էջ 147, 444, ծանոթ. 354:

8 Նույն տեղում, էջ 153-155: Տե՛ս նաև Մ. Կաղանկատվացի, նշվ.աշխ.,էջ 251:

9 Բաբկեն I (481-483թթ.)՝ հիշվում է Վահանաց պատերազմի ժամանակ (**Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 104: **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան 1982, էջ 295, 301-303, 315, 325, 329). Բաբկեն II (մոտ 520-530)՝ որդի Արտաշիրի, (**Օրբելյան Ստ.**, նշվ.աշխ., էջ 95):

10 **Աճառյան Հ.**, Հայ անձնանունների բառարան, հատոր Ա, Եր., 1942, էջ 353:

11 **Ալիշան Ղ.**, Յուշիկք Հայրենիաց Հայոց, Մխիթարեան Վ., հատոր Բ., Վենետիկ, 1870, էջ 159:

Բաբկեն III՝ որդի Քուրդ I-ի (709-740-ական թթ), **Քուրդ II՝** որդի Բաբկեն III-ի (մոտ 740-760-ական թթ):

Մեր կարծիքով, Ալիշանը, **Քուրդ II**-ին թյուրիմացաբար նույնացնում է **Քուրդ I**-ի հետ և Բաբկեն III-ի հետ տեղափոխում 7-րդ դարի վերջ՝ նրա համար իշխանության տարիներ նշելով 683-693թթ.[12]:

Ելնելով ժամանակագրական տվյալներից՝ Քուրդ II-ի դուստրը պետք է լինի 10-րդ դարի պատմիչ Շապուհ Բագրատունու կամ Անանուն Զրուցագիրի «Պատմության» մեջ հիշատակված Սյունյաց իշխանի դուստրը, որն ամուսնացած էր Վասպուրականի իշխան Սահակ Արծրունու որդի՝ Դերենիկ I-ի հետ[13]:

8-րդ դարի երկրորդ կեսի Սյունիքի իշխանների անունների վերաբերյալ կարող ենք միայն ենթադրաբար դատողություններ անել, սակայն, հաշվի առնելով թոռանը պապի անունով անվանակոչելու վերոհիշյալ տարբերակը, կարող ենք մոտավոր կազմել նաև 8-րդ դարի վերջում իշխող Սյունյաց իշխանների մոտավոր ցանկը: Հայտնի է, որ 9-րդ դարի Սյունյաց մեծ իշխան Վասակը ունեցել է 3 որդի՝ Փիլիպե, Սահակ և Ատրներսեհ[14]: Փիլիպեն հոր Վասակի մահից հետո տեր է դառնում բուն Սյունիքին և գահերեց տիտղոսին[15]: Սահակը ստանում է Գեղամա գավառը և հիմք դնում Գեղարքունիքի գահակալ իշխաններ ճյուղին[16]: Ատրներսեհի մասին տեղեկությունները սահմանափակվում են 2-3 հիշատակությամբ՝ առանց նրա բաժին կալվածքի ու ժառանգների[17]:

Հաշվի առնելով Վասակ Նահապետի ավագ որդու՝ **Փիլիպեի** անունը (ինչպես նշել ենք, որդուն պապի անունը դնելու սովորույթը)՝ կարող ենք ենթադրել, որ Վասակի հոր անունը ևս **Փիլիպե** էր: Իսկապես, **Փիլիպեի** անունը հանդիպում ենք 821թ. Դադիվանքում տեղի ունեցած եղերական դեպքի նկարագրության մեջ. «Այս Վարազ Տրդատին և իր որդի Ստեփանին սրանց ազգական Ներսեհ Փիլիպյանը միևնույն ժամին Խորաձորում սպանեց, որ կոչվում է **Դադոյի վանք**»[18]: Նույնն է վկայում նաև Ստ. Օրբելյանը. «Ի սոյն ամի և տէր Ներսեհ Սիւնի՝ որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ Տրդատ՝ որդի Ստեփաննոսի Աղուանից իշխանի, և զորդին ևս նորա ‘ի գոգ մօրն սատակէ»[19]: Փիլիպեի որդի Ներսեհը չէր կարող լինել Վասակ Նահապետի որդի Փիլիպեի որդին, ինչպես նշված է Ստ. Օրբելյանի աշխատության ծանոթագրության մեջ[20], այլ հաշվի առնելով ժամանակագրական տարբերությունը՝ նա կարող էր լինել միայն Վասակի եղբայրը, որով և կճշտվի Սյունիքի՝ 8-րդ դարի վերջի գահերեց իշխանի անունը: Ըստ երևույթին, նման եզրակացության է հանգել նաև Ալիշանը Սյունյաց իշխաններ իր կազմած ցանկում՝ Վասակ Նահապետից առաջ նշելով Փիլիպե Գ-ին[21]: Փիլիպեն չէր կարող լինել նաև Միհրանյան տոհմի ներկայացուցիչ, քանի որ հստակ նշված է նրա՝ Սյունի իշխանական տան ներ-

12 **Ալիշան Ղ.**, Սիսական, էջ 14, 17:
13 http://www.vostlit.info/Texts/rus4/Schapuch/frametext2.htm
14 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 172, 204, 254:
15 Նույն տեղում, էջ 254:
16 Նույն տեղում, էջ 254:
17 Նույն տեղում, էջ 196-197, 204:
18 Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 266:
19 Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 165, Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. էջ 255:
20 Նույն տեղում, էջ 449, ծանոթ. 411:
21 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 14, 17:

կայացուցիչ լինելու հանգամանքը և, բացի այդ, Միհրանյան տոհմի ամբողջ պատմության ժամանակաշրջանում նրանցից ոչ մեկը չի կրել **Փիլիպե** անունը:

Գտնում ենք, որ Փիլիպե Ի-ի կինը կարող էր լիներ Աղվանքի իշխանական տոհմից: Առավել հավանական է, որ նա լիներ Գագիկ Միհրանյանի դուստր **Ասպրամիկը**[1]: Այս փաստի օգտին է վկայում Մ. Կաղանկատվացու վկայությունը Վարազ Տրդատի և Ներսեհ Փիլիպյան ազգակցական կապի առկայության մասին[2]:

Ստացվում է, որ Ներսեհ Փիլիպյանը սպանել է իր քեռի Ստեփանոսի որդուն և թոռանը, որով և բացատրվում է նրանց ազգակցականության աստիճանը:

Այսպիսով՝ դեռևս անհայտ է մնում միայն 8-րդ դարի 60-80-ական թվականներին կառավարած իշխանի անունը: Հիմք ընդունելով վերոհիշյալ տարբերակը՝ նա պետք է կրեր **Սահակ, Բաբկեն** կամ **Ատրներսեհ** անունը: Այս անուններն են կրում ոչ միայն Սյունիքի 9-րդ դարի իշխանների գլխավոր ճյուղի, այլև Սյունի իշխանական տոհմի կողմնային ճյուղերի և Արցախ-Ուտիքին տեր դարձած Սյունի Առանշահիկյան տան բազմաթիվ ներկայացուցիչներ:

Մեր կարծիքով, Սահլի հայր **Սմբատը**, Վասակ Նահապետի հայր **Փիլիպեն** ու Կովսականի իշխան Սահակի հայրը, որի անունը մեզ մնում է անհայտ, եղբայրներ են: Եթե հաշվի առնենք, որ բոլոր երեք ճյուղերում էլ երկրորդ կամ երրորդ սերնդում հիշատակվում է **Սահակ** անունը, ապա թվում էր, թե կարելի է վստահությամբ նշել Քուրդ II-ի և Փիլիպե Ի-ի միջև պակասող օղակը, որով ամբողջական տեսքի էր բերվում 9-րդ դարի Սյունյաց գահերեց իշխանների անվանացանկը:

Նույն անունն էին կրում Վասակ Նահապետի երկրորդ որդի՝ Գեղարքունիքի իշխան Սահակը, Կովսական-Քաշունիքի իշխան Սահակը և հետագայում Արցախին տեր դարձած Սահլ (Սահակ) Սմբատյանը:

Ստ. Օրբելյանի աշխատության մեջ նշված փաստերից մեկը, սակայն, հնարավորություն տվեց ճշտությամբ որոշել 8-րդ դարի 60-80-ական թվականներին կառավարած իշխանի անունը: Այդ վկայության համաձայն՝ Սյունիքի եպիսկոպոս տեր Հովակիմի աթոռակալության ժամանակաշրջանում «պատարագի ժամանակ սաստիկ հակառակություն տեղի ունեցավ գյուղաքաղաքների նախաթոռ գերադասության ու նախապատվության վերաբերյալ, թե որն է լինելու: Եվ Շաղատի Խոսրովը՝ Գազանի սերնդից, շարադրված վճռագիրը ներկայացրեց աստվածապահ ու բնիկ տեր Ատրներսեհին՝ Սյունիքի իշխանին ու հայոց իշխանին»[3]: Ինչպես հայտնի է, Սյունիքի աթոռակալ եպիսկոպոսներից Հովակիմ անունով միայն մեկ եպիսկոպոս կա, որին Օրբելյանը տալիս է 17 տարվա աթոռակալություն[4]: Հովակիմը Ստեփանոս Ա-ից (734-735թթ.) հետո աթոռակալած Հովսեփ Բ-ի (735-752թթ.) հաջորդն էր, որն նույնպես պաշտոնավարել է 17 տարի և աթոռակալել է (752-769) թվականներին[5]: Նշենք, որ Գ. Գրիգորյանը «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ Հովակիմի աթոռակալության համար նշում է (772-789թթ.) թվականները՝ Ստեփանոս Ա-ից հետո

1 **Մ. Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 266:
2 Նույն տեղում, էջ 266:
3 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 93:
4 Նույն տեղում, էջ 168, 386:
5 **Brosset M.**, նշվ. աշխ., p. 98.

ավելացնելով Հովհան Բ-ին, որի անունը նշված չէ Օրբելյանի աշխատության մեջ՝ նրան տալով 9 տարվա (735-744թթ) պաշտոնավարություն[1]: Այսպիսով, իմանալով Տեր Հովակիմի աթոռակալության տարիները՝ կարծում ենք, որ 8-րդ դարի 60-80-ական թվականներին կառավարած իշխանը կրել է **Ատրներսեհ** անունը: Ատրներսեհը հիշատակվում է նաև Սիոն I (767-775թթ.) կաթողիկոսի կողմից Պարտավում 768թ. հրավիրված ժողովի մասնակիցների թվում, որտեղ Հայոց իշխան Սահակ Բագրատունու, Սմբատ Բագրատունու, Վահրամ Խոռ-խոռունու, Սահակ Գողթնեցու և ուրիշ իշխանների հետ հիշատակվում են նաև Սյունիքի տեր Ատրներսեհն ու Սադովկ Սյունյաց եպիսկոպոսը[2]:

Ղ. Ալիշանը այս բաց տարիների համար նույնպես նշում է **Ատրներսեհ** անունը՝ համարելով նրան Փիլիպե Գ-ի հայր և Փիլիպե Բ-ի որդի ու Վասակ Գ-ի թոռ[3]: Կարծում ենք, այստեղ Ալիշանին շփոթության մեջ է գցել Ստ. Օրբելյանի աշխատության մեջ հայոց 176 թվականին (727թ.) տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը, որի համաձայն, երբ արաբ ամիրա Մրվանը գալիս է Սյունիք, «հաստատվում է Շաղատ բերդագյուղում. կամենում է Սիսական գեղեցիկ նահանգը ևս ավերել: Զորքը կենտրոնացնում է այնտեղ՝ Ծղուկ գավառում: Ապա Սյունիքի տեր և իշխանաց իշխան Վասակը գնում և Ատրպատականից բերում է պարսիկ Բաբանին ու փախուստի մատնում: Բայց ինքը նույն տարում վախճանվում է»[4]: Սակայն դեպքերի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել ոչ թե 727թ., այլ 821թ., քանի որ Օրբելյանը միևնույն թվականին է վերագրում Վասակ իշխանի մահը և Աղվանքի իշխան Վարազ Տրդատի սպանությունը[5]: Ըստ երևույթին՝ Օրբելյանի նշած թվականը վրիպակ է, որի ճիշտ՝ հայոց 270 (821թ.) թվականը հանդիպում ենք Կաղականտվացու մոտ[6]: Այս շփոթմունքի պատճառով էլ Ալիշանի կազմած Սյունյաց 8-րդ դարի սկզբի իշխանների ցանկը նույնությամբ կրկնում է 9-րդ դարի սկզբի իշխանների ցանկը[7]: Բացառելով Վասակ Գ-ի և Փիլիպե Բ-ի գոյությունը՝ համամիտ ենք նրա կազմած Սյունյաց իշխանական տան հետագա իշխանների անունների ցանկի հետ՝ գտնելով, որ Քուրդ II-ին հաջորդել է Ատրներսեհը, իսկ այնուհետև՝ Փիլիպե I-ը:

Ինչպես ընդունված էր ժամանակի իշխանական տոհմերում, Սյունյաց իշխանական տունը ևս խնամիական կապերով կապված էր մյուս իշխանական տներին: Ուստի, հավանական է, որ Ատրներսեհի կինը լիներ Բագրատունյաց տոհմից, հավանաբար 753-770թթ. Հայոց իշխան Սահակ III Բագրատունու դուստրը:

Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել այն իրողությունը, որ, 9-րդ դարից սկսած, Սյունյաց իշխանական ընտանիքում կարելի է հաճախ հանդիպել **Սահակ**, **Սմբատ** և **Աշոտ** անունները, որոնք հիմնականում կրում էին Բագրատունի տոհմի ներկայացուցիչները, և որոնցով մինչև այդ Սյունյաց տոհմում

1 **Գրիգորյան Գ.**, **Ս. Հախվերդյան**, Սյունիքի Պատմություն, Եր., 2001, էջ 253:

2 **Տաշյան Յ.**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 653:

3 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 14, 17:

4 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 165:

5 Նույն տեղում, էջ 165:

6 **Մ. Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 255:

7 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ. էջ 17:

չէին անվանակոչում: Ն. Ադոնցը նույնպես գտնում է, որ. «Ոչ Աղվանքի և թչ էլ Սյունյաց իշխանական տոհմերի մեջ չի պատահում Սմբատ անունը նախքան նրանց Բագրատունիների հետ խնամություն հաստատելը»[1]:

Ատրներսեհից հետո Սյունյաց իշխանական տունը բաժանվում է 3 ճյուղի: Նրա ավագ որդին՝ Փիլիպե Ի-ը, տեր է դառնում Սյունիքի մեծագույն մասին և գահերեց տիտղոսին, երկրորդ որդի Սմբատը տեր է դառնում Վայկունիքին և հիմք դնում Արցախի իշխանական նոր տոհմին, իսկ երրորդ որդին, որի անունը մեզ անհայտ է (թերևս հնարավոր էր կրեր **Հրահատ** անունը՝ հաշվի առնելով ավագ թոռան անունը), սակայն հայտնի են նրա Սահակ որդու և հաջորդների անունները, հիմք է դնում Կովսական-Քաշունիքի գահակալ իշխանությանը:

Կովսականի իշխան Սահակը մահացել է մինչև 844թ., քանի որ այդ թվականով թվագրվող հիշատակության մեջ նրա որդի Հրահատը հիշվում է որպես Կովսականի ու Քաշունիքի իշխան[2]: Այս Հրահատը ամուսնացել էր Վասակ Նահապետի դուստր Քուպղիդուխտի հետ[3], որին Ութմազյանը սխալմամբ համարում է Վասակի որդի Փիլիպե Ի-ի դուստր[4]: Հաշվի առնելով Կովսականի իշխան Սահակի գործունեության ժամանակաշրջանը՝ միանգամայն հավանական է, որ նա լիներ Վասակ Նահապետի՝ մեզ անհայտ անունով հորեղբոր որդին և, որպես ժառանգական տիրույթ, իր հայր Ատրներսեհից ստանար Սյունիքի հարավային գավառները՝ Կովսականն ու Քաշունիքը:

Վասակ Նահապետի մյուս հորեղբայրն էր հետագայում Արցախին տիրացած Սահլ-Սահակի հայր Սմբատը: Հետազոտողների մի մասը Սմբատին համարում է Բագրատունի[5]: Սահլին և նրա հաջորդներին Բագրատունի համարելը արդարացիորեն բացառում են հարցին անդրադարձած հեղինակներից Բ. Ուլուբաբյամը և Հ. Սվազյանը[6]:

Մեր նյութի քննության շրջանակից դուրս է նաև Սահլ Սմբատյանի հաջորդների տոհմագրությունը: Սակայն չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ Սահլ Սմբատյանը հիշատակվում է որպես Սյունիքի տեր ու Հայկյան տոհմի ներկայացուցիչ[7]: Ճիշտ է, նույն Սահլը վկայվում է նաև իբրև Առանշահիկ կամ Եռանշահիկ ու նույնիսկ նշվում է նրա Զառմիհրական արքաների տոհմին պատկանելը[8]: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Զարմիհրական տոհմը ծագում է հայ Արշակունիներից[9], և մեր պատմիչներից ոչ մեկը Արշակունիներին **Հայկյան** կամ **Հայկազյան** տոհմանուններով չի կոչել, սակայն շեշտել են այդ հանգամանքը: Կարծում ենք, այստեղ **Առանշահիկ** կամ **Եռանշահիկ** անվանու-

---

1 **Ադոնց Ն.**, Երկեր Ե հատորով, հ. Ա, «Պատմագիտական ուսումնասիրություններ», Բագրատունյաց փառքը, Եր., էջ 2006, 509:

2 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 198:

3 Նույն տեղում, էջ 204:

4 **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 320:

5 **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 506-525, տե՛ս նաև **Բարխուդարյան Ս. Գ.**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները 9-10-րդ դդ., «ՊԲՀ», Երևան 1971, №1, էջ 58-68, Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 96:

6 **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը IX –XIV դդ., Եր., 1975, էջ 65-72, տե՛ս նաև Հ. Սվազյան, Արցախյան աշխարհը Միհրանյան տոհմի վերացումից հետո, «ԼՀԳ», Եր., 2012, №1, էջ 6-7:

7 **Մ. Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 266:

8 Նույն տեղում, էջ 255, 259:

9 **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1990, էջ 166, տե՛ս նաև **Փ. Բուզանդ**, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 27-31, **Մ. Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 31:

մը պետք է հասկանալ ոչ թե որպես տոհմանուն, այլ տիտղոս, այսինքն՝ Առանի կամ Աղվանքի թագավոր, ինչպես՝ **Շիրվանշահ**՝ Շիրվանի թագավոր և այլն: Այս տիտղոսները ունեն պարսկական ծագում և հանդես են գալիս Սասանյան շրջանից[1]: Հ. Քյուրտյանը գտնում է, որ «Սահլ Սմբատեանի Կաղանկատուացիէ տրուած Եռանշահիկ կոչումը աւելի տիտղոս մըն է ժառանգական»[2]: Վ. Մինորսկին նույնպես գտնում է, որ Եռանշահիկ անվանումը տիտղոս է և այն կրում էին նաև Միհրանյանները[3]: Պետք է հաշվի առնել, որ Սահլ Սմբատյանի կալվածքները սկզբնական շրջանում ընդգրկել են **Ծար** երկիրը, «որը սկսվում է Սյունյաց Սոդից և կազմում է հին Վայկունիքի մի մասը, Ականան և Կակառը, որոնք հիշատակվում են ԺԳ դարում և գտնվում են Սյունյաց սահմաններում»[4]: «Ծար երկիրը գրավում է Տրտուի միջին հոսանքը, Սոդքի մի մասն է կազմում և գտնվում է Սյունիքում»[5]: Նույնն է նշում նաև Վարդան Վարդապետը՝ «Սոդքի գավառը Ծարի երկիրն է»[6]: Նույն տեղեկությունը մենք տեսնում ենք նաև «Աշխարհացոյց»-ում[7]: Իր հերթին Օրբելյանը Վայկունիքի բոլոր գյուղերը Սոդք գավառի մեջ է թվարկում[8]: Մ. արքեպիսկոպոս Սմբատեանցը գտնում է, որ Վայկունիքը և Սոդքը նույնն են.՝ «Այս Սոդից գաւառը կարծես իւրաքանչիւր տիրող իշխանութեան ժամանակ մի նոր անուն է ստացել. զօ. Ռմբոսաեան գաւառ, Սոդից գաւառ, Արտից գաւառ, Մաղաղ, Գեղամարակ, Վայկունիք ևլն»[9]: Այս փաստերը հերքում են այն պնդումը, որ «միջնադարյան իրականության մեջ Սոդքը երբեք չի վերաբերել Սյունիքին»[10]: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մինչև 9-րդ դարը Վայկունիքը Սոդքի հետ որպես մեկ ամբողջական գավառ գտնվում էր Սյունյաց իշխանների ենթակայության տակ, և Սմբատը կամ Սահլ Սմբատյանը, որպես պապենական ժառանգություն, ստացել են իրենց նախնիներից: Թովմա Արծրունու վկայությամբ՝ նրա կալվածքներից էր նաև Շաքին[11]: Կարծում ենք, ճիշտ չէ Շաքին նույնացնել Անդրկուրյան կամ բուն Աղվանքի Շաքի (ներկայիս՝ **Նուխի**) բնակավայրի հետ, չնայած Բաբեկ Խուռամյանի ձերբակալումից հետո նրա հեղինակությունը և հզորությունը զգալիորեն մեծացել էր[12], սակայն, այնուամենայնիվ, Սյունի-Առանշահիկյան այս նոր տոհմը դեռևս չէր իշխում Անդրկուրյան տարածքների վրա: Նույնիսկ նրա որդի Ատրներսեհը հոր գերի տարվելուց հետո իշխում էր միայն Վերին Խաչենի ու Ծարի վրա[13]: Գտնում ենք, որ Թ. Արծրունու հիշատակած Շաքին Ալախ գավառի Շաքի գյուղը կամ

1 Баладзори, նշվ. աշխ., стр. 7.

2 **Քյուրտյան Հ.**, Բաբակ և իպն Սմպատ, «Բազմավեպ», Վենետիկ, 1958, էջ 74:

3 **Минорски В.**, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, стр.30.

4 **Ալիշան Ղ.**, Արցախ, Եր., 1993, էջ 12:

5 Նույն տեղում, էջ 19:

6 Աշխարհացոյց Վարդան Վարդապետի, Փարիզ, 1860, էջ 12:

7 **Երեմյան Ս.Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963, էջ 117:

8 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ.,էջ 397-398:

9 **Մ. արքեպիսկոպոս Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895., էջ 32:

10 **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 47:

11 **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1978, էջ 202-203:

12 Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Արաբական աղբյուրներ, **Բ, Իբն ալ-Ասիր**, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունը **Ա. Տեր Ղևոնդյանի**, Եր., 1981, էջ142-144,՝տե՛ս նաև Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Գ, նշվ. աշխ., **Աբու Հանիֆա ալ- Դինավարի**, Մատյան երկարապատում ավանդույթների, էջ 218, Յակուբի, Պատմություն, էջ 387:

13 **Ուլուբաբյան Բ.**, նշվ. աշխ., էջ 71:

բերդ էր Սիսիանի մոտ: Վ. Մինորսկին ևս հավանական է համարում Շաքիի նույնացումը Սիսիանի Շաքիի հետ[1]: Զ. Բունիաթովը ևս գտնում է, որ Թ. Արծրունու հիշատակությունը ճիշտ է և Շաքին տեղայնացնում է Սիսիանի Շաքի բնակավայրի հետ, սակայն ադրբեջանցի պատմաբաններին հատուկ կեղծարարությամբ այդ փաստը փորձում է օգտագործել ապացուցելու, թե իբրև Սահլ Սմբատյանը «աղվան» իշխան է, իսկ Սյունիքն էլ Աղվանքի մի մասն է կազմել[2]:

Այս բոլոր փաստերը ապացուցում են, որ Սահլ Սմբատյանը սերում է Սյունի իշխանական տոհմից և ոչ թե բռնությամբ կամ զենքի ուժով էր տիրացել Սոդք-Վայկունիքին ու դրա համար է դարձել Սյունիքի տեր ու Սյունի, այլ այդ գավառը ստացել էր՝ որպես հայրական ժառանգություն:

Փիլիպե I-ի որդիներն էին **Ներսեհ Փիլիպյանը**, որը 821թ. սպանեց Աղվանքի իշխան Վարազ Տրդատ Միհրանյանին[3], և 9-րդ դարի Սյունիքի առաջին գահերեց իշխան **Վասակ III-ը**, որի կառավարման տարիներն էլ համապատասխանաբար կլինեն 800-ական թթ սկզբից մինչև 821թ.: Հնարավոր է, որ Փիլիպե I-ի որդին լիներ նաև Սյունյաց եպիսկոպոս Դավիթ II-ի (840-857թթ)[4] օրոք գահերեց իշխան հիշատակվող **Գրիգորը**[5]՝ Հրահատ և Գագիկ իշխանների հայրը[6]: Նրա գահերեց տիտղոսի հիշատակումը վկայում է դեռևս նախարարական շրջանին հատուկ ավագության ինստիտուտի առկայության մասին, երբ տոհմի ամենատարեց անդամն էր համարվում տոհմի տանուտերը:

Կարծում ենք, որ Ներսեհ Փիլիպյանի բաժին կալվածքը Բաղք գավառն էր: Այն փաստը, որ Վարազ Տրդատի սպանությունից մի քանի տարի անց՝ 826 թ.-ին Միհրանյան իշխանական տան կողմնային ճյուղի ներկայացուցիչ Ստեփանոս Աբլասադը Բաբեկի օգնությամբ իր ազգական Վարազ Տրդատի սպանության համար վրեժ է լուծում Բաղասական աշխարհից[7], վկայում է, որ Ներսեսը իսկապես տիրում էր Բաղքին: Լեոն նույնպես գտնում է, որ Ստեփանոս Աբլասադի և Բաբեկի կողմից Բաղաց աշխարհի և Բերձորի ավերումը Վարազ Տրդատի սպանության վրեժխնդրության արդյունք էր[8]:

Վասակ III-ի մահից հետո Սյունիքի կենտրոնական իշխանությունից բաժանվում է ևս մեկ իշխանական կալվածք՝ Գեղարքունիքի գահակալ իշխանությունը, որը գոյատևում է մինչև 10-րդ դարի 20-ական թթ.[9]:

Այսպիսով՝ մատենագրական սակավ տեղեկությունների համեմատական քննության արդյունքում կարող ենք կազմել 8-րդ դարի Սյունյաց իշխանների ցուցակը: Ստորև ներկայացնում ենք Սյունյաց իշխանների՝ մեր կազմած հաջորդականությունը և նրանց կառավարման մոտավոր տարիները՝

1.Քուրդո I կամ Քուրդ I՝ որդի Հովհան II-ի՝ Սյունիքի իշխան (691-709թթ.),

2.Բաբկեն III՝ որդի Քուրդ I-ի՝ Սյունիքի իշխան (709-մոտ 740թթ.),

3.Քուրդ II՝ որդի Բաբկեն III-ի՝ Սյունիքի իշխան (մոտ 740-760-ական թթ.),

---

1 **Минорски В.**, նշվ. աշխ., стр.30.

2 **Буниятов З.**, Азербайджан вVII-IX вв., Баку, 1965, с. 184-190. տե՛ս նաև նույնի, Новые данные о местонахождении крепости Шаки. ДАН Азерб. ССР, 1959, т. XV, №9. с. 869-871.

3 **Մ. Կաղանկատվացի**, էջ 255, Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 165:

4 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 195, 464, ծանոթ. 594:

5 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 195:

6 **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 197, տես նաև **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 315-319:

7 **Մ. Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 256, Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 166:

8 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. II, Եր., 1967, էջ 419:

9 **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 306-315:

4.Ատրներսեհ՝ որդի Քուրդ II-ի՝ Սյունիքի իշխան (մոտ 760-780-ական թթ),

5.Փիլիպե I՝ որդի Ատրներսեհի՝ Սյունիքի գահերեց իշխան (մոտ 780-800 թթ.),

6. Վասակ III որդի Փիլիպե I-ի՝ Սյունիքի գահերեց իշխան (մոտ 800-821 թթ.):



JIRAYR MIRUMYAN - THE RULING HOUSE OF SYUNIK IN THE 8ht CENTURY - The sources about the Ruling house of Syunik in the 8th century are scarce.We have briefly presented the approximate ruling timetables of princes of Syunik in the early 8th century in the article,about which St. Orbelyan, M.Kaghankatvatsi report not complete information.We tried to form the list of Syunik princes´ names of the 8th century in approximate accuracy and the question of belonging to ruling dynasties of some of their wives in the result of comparative study of historic information.

Key words: The ruling house of Syunik, the years of ruling, 8th century, timetable, refer to, nomenclature

ЖИРАИР МИРУМЯН - СЮНИКСКИЙ ДОМ В 8 ВЕКЕ - Первоисточников о княжеском доме 8 века Сюника мало. В статье кратко представлены приблизительные периоды правления князей Сюника в 8 веке, о которих Ст. Орбелян, М. Каланкатваци сообщают недостаточные сведения.

В резвультате сравнительного анализа исторических сведений пытались с приблизиительной точностью составить список имен князей Сюника восьмого века и вопрос родовой принадлежности некоторых из их жен.

Ключевие слова: княжеский дом Сюника, годы управления, 8 век, хронология, упоминать, список имен.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1.Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978:

2.Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:

3. Գանձակեցի Կ., Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

4.Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982:

5. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Երևան, 1990:

6. Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:

7. Պատմություն Սեբեոսի, Երևան, 1979:

8. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լույս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:

9. Աշխարհացոյց Վարդան Վարդապետի, Փարիզ, 1860:

10. Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

11. Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունը Ա. Տեր Ղևոնդյանի, Երևան, 1981:

12. Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունը Ա. Տեր Ղևոնդյանի, Երևան, 2005:

13.Баладзори, Книга завоевания стран, текст и пер. П. Жузе, Баку, 1927.

14.Средневековые исторические истпчники Вастока и Запада, Абу Мухаммад Ахмад ибн А´Сам ал-Кифи, Книга завоеваний, част II, пер. З. Буниатова, Баку, 1981.

15.http://www.vostlit.info/Texts/rus4/Schapuch/frametext2.htm.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ադոնց Ն., Երկեր Ե հատորով, հ. Ա, Երևան, 2006:

2. Աճառյան Հ., Հայ անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 353:

3. Ալիշան Ղ., Յուշիկք Հայրենիաց Հայոց, Վ. Մխիթարեան, հատոր Բ., Վենետիկ, 1870, էջ 159:

4. Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881:

5. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1898:

6. Բարխուդարյան Ս. Գ., Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները 9-10-րդ դդ., «ՊԲՀ», Երևան, 1971, №1:

7. Բիթարյան, Մ. *Արմինիայի արաբ ոստիկանների ժամանակագրությունը,* «ԼՀԳ», Երևան, 1989, № 6:

8. Գրիգորյան Գր., Հախվերդյան Ս., Սյունիքի Պատմություն, Երևան, 2001:

9. Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան. 1963:

10. Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967:

11. Տեր Ղևոնդյան Ա., Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, «ՊԲՀ», Երևան, 1977, №1:

12. Նալբանդիան Հ., Արաբացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1956, №1:

13. Ութմազյան Հ., Սյունիքը IX-X դարերում, Երևան, 1958:

14. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը IX –XIV դդ., Երևան, 1975:

15. Մ. արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895:

16. Սվազյան Հ., Արցախյան աշխարհը Միհրանյան տոհմի վերացումից հետո, «ԼՀԳ», Երևան, 2012, №1:

17. Տաշյան Յ., Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

18. Քյուրտյան Հ., Բաբակ և իպն Սմպատ, «Բազմավեպ», Վենետիկ, 1958:

19. Буниятов З., Азербайджан вVII-IX вв., Баку, 1965.

20. Буниятов З., Новые данные о местонахождении крепости Шаки. ДАН Азерб. ССР, 1959, т. XV, №9.

21. Минорски В., История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963.

22. Histoire de la Sioune par Stephannos Orbelian; traduite de l´armennien par M. Brosset, second livraison, introduction, Saint-Petersbourg, 1864,